# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

**Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության**
**նախարարության գիտության պետական կոմիտեի**
**և**
**Տեսական ֆիզիկայի ասիական-խաղաղօվկիանոսյան կենտրոնի միջև**
**գիտատեխնիկական համագործակցության մասին**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) և Տեսական ֆիզիկայի ասիական-խաղաղօվկիանոսյան կենտրոնը, Փոհանգ, Կորեա (այսուհետ՝ Կենտրոն)՝

- **հաշվի առնելով** երկուստեք կարևոր նշանակություն ունեցող ոլորտներում գիտական հետազոտությունների իրականացման ուղղությամբ Կողմերի երկկողմ հետաքրքրությունը,
- **գիտակցելով** երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում միջազգային համագործակցության կարևորությունը,
- **ցանկանալով** փոխադարձ հիմունքներով խթանել սույն համագործությունը,

**համաձայնեցին հետևյալի շուրջ.**

## Հոդված 1

Կոմիտեն և Կենտրոնը (այսուհետ՝ միասին՝ Կողմեր) կհամագործակցեն գիտահետազոտական գործունեության շրջանակներում՝ երկկողմ գիտական հետաքրքրությունների հիման վրա սահմանվելիք ոլորտների և հարակից թեմաների ուղղությամբ:

Յուրաքանչյուր երկու տարին մեկ Կողմերը կվերանայեն սույն Փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) շրջանակներում իրականացվող համագործակցությունը:

## Հոդված 2

Վերոնշյալ համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով.

- համատեղ գիտաժողովների, աշխատանքային հանդիպումների և դպրոցների միջոցով իրականացվող գիտահետազոտական գործունեություն,
- գիտատեխնիկական անձնակազմի փոխանակում,
- գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակում:

## Հոդված 3

Վերոնշյալ համագործակցության ֆինանսավորման կարգն ու պայմանները ենթակա են սահմանման Կողմերի միջև ստորագրվելիք առանձին պայմանագրերով:

## Հոդված 4

Սույն Հուշագրի շրջանակներում անձնակազմի, տեղեկատվության և նյութերի փոխանակմանն առնչվող հարցերը ենթակա են կարգավորման՝ համաձայն Կողմերի պետություններում գործող ազգային օրենսդրության, ինչպես նաև միջազգային այն համաձայնագրերի և պայմանագրերի դրույթների, որոնց մասնակցում է Կողմերից յուրաքանչյուրը:

## Հոդված 5

Գիտնականների փոխանակման դեպքում, որպես կանոն, ճանապարհածախսը ենթակա է վճարման ուղարկող կրթական /գիտական հաստատության կողմից, եթե Կողմերն այլ կերպ չեն պայմանավորվում: Կեցությանն առնչվող ծախսերը հոգում է ընդունող կրթական /գիտական հաստատությունը՝ համաձայն ներքին կանոնակարգերի: Նյութերի փոխադրմանն առնչվող ծախսերը հոգում է ուղարկող կրթական /գիտական հաստատությունը, եթե Կողմերն այլ կերպ չեն պայմանավորվում:

## Հոդված 6

Սույն Հուշագիրը կնքվում է չորս (4) տարի ժամկետով: Հուշագրի վավերականության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա չորս (4) տարիների համար, եթե Կողմերից որևէ մեկը սույն Հուշագրի գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Հուշագիրը կարող է լրամշակվել և փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ առանձին արձանագրությունների միջոցով: Նշյալ արձանագրությունները կկազմեն սույն Հուշագրի անբաժան մասը:

Սույն Հուշագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում ծագած վեճերը և տարաձայնությունները կլուծվեն խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Սույն Հուշագրի գործողության ժամկետի ավարտի կամ դադարեցման դեպքում Կողմերը կշարունակեն կատարել Հուշագրի՝ ուժի մեջ լինելու ժամանակահատվածում կնքված պայմանագրերի դրույթները, եթե Կողմերն այլ կերպ չեն պայմանավորվում:

Սույն Հուշագիրը կատարված է ք. Երևանում նոյեմբերի 23-ին, 2 բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն, կորեերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Ի հավաստումն սույն Հուշագրին իրենց համաձայնության՝ համապատասխան պաշտոնյաները ստորագրեցին սույն Հուշագիրը.

ՀՀ ԿԳՆ գիտության
պետական կոմիտեի
կողմից

Նախագահ՝

**Սամվել**
**Հարությունյան**

Տեսական ֆիզիկայի
ասիական-
խաղաղօվկիանոսյան
կենտրոնի կողմից

Նախագահ՝

Bum Hoon Lee

**Բում-Հուն Լի**

아르메니아 교육과학부 국립과학위원회와
대한민국 포항 소재 (재)아시아태평양 이론물리센터 간의
과학 및 기술 협력에 관한

# 양해각서

아르메니아 교육과학부 국립과학위원회 (이하 아르메니아 국과위)와 대한민국 포항 소재 (재)아시아태평양 이론물리센터 (이하 아태센터)는,

- 선별된 과학 연구분야에 대한 공동의 이해관계가 있으며,
- 해당 분야에서 국제 협력의 중요성을 인식하며,
- 호혜적 관계에 기초하여 위의 협력을 발전시켜 나가기를 희망하며

**다음과 같이 합의한다.**

## 제1조

아르메니아 국과위와 아태센터 (이하 양측)는 상호호혜적 학문적 이해관계에 따라 선별된 주제 및 연관 과제에 대한 협력적 연구 활동을 수행한다.

양측은 매 2년마다 이 양해각서 내용을 이행함에 있어 협력현황을 검토한다.

## 제2조

상기의 협력은 아래 내용을 포함할 수 있다:

- 공동 워크숍, 컨퍼런스 및 (계절)학교와 같은 형태의 공동 연구 활동,
- 과학 기술 인력 상호 교류,
- 과학 기술 정보 상호 교환.

## 제3조

상기의 협력을 위한 재정적 지원의 세부 조건은 양측이 별도로 합의 하에 정한다.

## 제4조

이 양해각서에서 언급한 인력, 정보 및 자료 교환은 자기 나라 법률의 범위 내에서 이뤄지며, 궁극적으로는 국제 조약이나 약정에 따른다.

## 제5조

과학자(인력) 교환에 있어, 통상적인 규칙에 따라 교통비는 양측 간 별도의 합의가 없는 한 해당인력의 소속 연구/학술 기관에서 부담한다. 체재비의 경우는 초청 연구/학술기관의 내부규정에 따라 초청 연구/학술기관에서 지원한다. 자료 송달 비용의 경우 양측간 별도 합의가 없는 한 발송 연구/학술기관이 부담한다.

## 제6조

이 양해각서는 4년 간 유효하며, 양측 중 어느 한 쪽이 6개 월 전 서면 종료의사를 표명하지 않는 한, 매 4년마다 자동갱신된다.

이 양해각서는 양측간 서면 합의를 통해 수정될 수 있으며, 별도의 기록으로 보관한다. 수정 양해각서는 이 양해각서와 하나의 문서로 통합관리한다.

이 양해각서를 해석하고 시행함에 있어 발생하는 모든 논쟁 및 의견불일치는 협의를 통해 해결한다.

양측이 합의하지 않는 한, 이 양해각서를 통해 시행한 사항들은 이 양해각서의 기간 만료 및 종료에 영향받지 않는다.

이 양해각서는 2016년 11월 23일 예레반에서 영어, 한국어 그리고 아르메니아어로 작성되었으며, 각각 2부씩 만들어 보관한다. 2부 모두 원본이다.

각 기관의 적절한 권한 주체는 이 양해각서의 내용에 동의하며, 아래에 서명한다.

**아르메니아**
**국과위**

**위원장 삼벨 하루티우니안 박사**

**대한민국**
**아태센터**

**소장 이범훈 교수**

# MEMORANDUM OF UNDERSTANDING

on scientific and technical collaboration between the
State Committee of Science of the Ministry of Education and Science, Republic of Armenia
and
Asia Pacific Center for Theoretical Physics, Pohang, Korea

The State Committee of Science of the Ministry of Education and Science, Republic of Armenia (hereinafter referred to as SCS), and The Asia Pacific Center for Theoretical Physics, Pohang, Korea (hereinafter referred to as APCTP):

- considering their common interests in selected fields of scientific research;
- recognizing the importance of international collaboration in those fields;
- wishing to develop this collaboration on a reciprocal basis

## HAVE AGREED AS FOLLOWS

### Article 1

The SCS and the APCTP (hereinafter jointly referred to as Parties) will collaborate in research activities concerning selected topics and related subjects to be agreed upon according to the reciprocal scientific interests.

Every two years the Parties shall review their co-operation as carried out in the implementation of the present Memorandum of Understanding (MOU).

### Article 2

It is agreed that the cooperation referred to above may include:

- joint research activities in the form of joint workshops, conferences and schools;
- mutual exchange of scientific and technical personnel;
- mutual exchange of scientific and technical information.

### Article 3

The terms and conditions of financial support for the above-mentioned cooperation shall be established within the frames of a separate agreement to be concluded between the Parties.

### Article 4

It is understood that the exchange of personnel, information and materials under the

present MOU is subject to the legislation to which the parties have respectively to comply with, as well as to the commitments eventually undertaken by each of them under international Treaties or Agreements.

**Article 5**

As regards the exchange of scientists, as a general rule, travel expenses will be paid by the home research/academic Institute, unless of special agreements between the Parties. Living expenses will be paid by the host research/academic Institute, according to its internal rules. Transport costs related to materials will be covered by the sending research/academic Institute, unless of special agreements between Parties.

**Article 6**

The present MOU is concluded for a period of four years. The MOU will be automatically renewed for an additional period of four years at each expiration date, unless any party gives six months' advance notice in writing to terminate the memorandum.

The present MOU may be modified and amended through the written agreement of the Parties via separate records. Such records shall become the inseparable part of the present MOU.

Any arguments and disagreements during the interpretation and implementation of the present MOU shall be settled via negotiations.

The expiry and the terminations of the present MOU shall not affect the contracts signed within the MOU in action, if the Parties have not agreed otherwise.

The present MOU is done in Yerevan on 23 November, 2016 in English, Korean and Armenian in two (2) original copies. Both copies are authentic.

As witness to their consent of this MOU, the appropriate authorities hereto provide their signatures:

| | |
|---|---|
| For<br>**SCS**<br>**Republic of Armenia** | For<br>**APCTP**<br>**Korea** |
| [signature] | Bum-Hoon Lee [signature] |
| **Chairman Dr. Samvel Haroutiunian** | **President Prof. Bum-Hoon Lee** |